

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ  
ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ  
XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ, XX Դ. ՍԿՁԲԻՆ  
Բոյաջյան Ա. Գ., Մահտեսյան Հ. Շ.**

Սույն հոդվածում ներկայացվել է Հարավային Կովկասի վարչատարածքային բաժանման փոփոխությունները և էթնոկրոնական կազմի շարժընթացը XIX դ. երկրորդ կեսին, XX դ. սկզբին: Ուսումնասիրելիս մասնավորապես ուշադրություն ենք դարձրել հայաբնակ նահանգների, գավառների և բնակավայրերի ազգային կազմին ու վարչատարածքային կառուցվածքին:

**Բանալի բառեր.** վարչատարածքային բարեփոխում, էթնիկական կազմ, նահանգ, գավառ, բնակավայր, մահալ, փաշայություն, օկրուգ, մարզ, թագավորություն:

**Նախաբան:** Հարավային Կովկասը բոլոր ժամանակներում իրենից ներկայացնում է ազգագրական թանգարան: Դրանով պայմանավորված ներկայացվող ժամանակահատվածի սույն տարածաշրջանի վարչատարածքային կառուցվածքի փոփոխության շարժառիթների և էթնիկական կազմի ուսումնասիրությունն ունի արդիական նշանակություն: Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի վարչատարածքային բաժանման պատճառով տարածաշրջանի տերիտորիալ և էթնիկական հակամարտությունների առաջացման շարժառիթները, բախումները և հետևանքները: Դրա վառ ապացույցն են 1905թ., 1918-1920թթ. հայ-թուրքալեզու ժողովուրդների (ներկայիս ադրբեջանցիներ) և 1980-ական թվականների վերջից սկիզբ առած և մինչ այսօր շարունակվող հայ-ադրբեջանական, վրաց-աբխազական, վրաց-օսական պատերազմները, թալիշ-ադրբեջանական, լեզգի-ադրբեջանական հակամարտությունները:

Սույն հոդվածի գիտական նորույթն այն է, որ նորովի են մեկնաբանվում Հարավային Կովկասի XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին վարչատարածքային բաժանման փոփոխությունները, որոնք նպաստել են էթնոսների տեղաշարժերին և էթնոկրոնական հակամարտությունների խորացմանը: Հիշատակենք, որ 1980-ական թվականների վերջերին վերսկսված էթնիկական հակամարտությունների շարժառիթը և դրդապատճառը հիմնականում հանդիսացել է ոչ արդարացի վարչատարածքային բաժանումը: Ցարական և խորհրդային կառավարման տարիներին վարչատարածքային սահմաններն այնպես են անցկացվել, որ այն էթնիկ բախումների պատճառ դառնա: Կենտրոնական իշխանություններն առաջնորդվել են հայտնի «Բաժանիր և տիրիր» սկզբունքով: Հատկապես դա ցցուն երևում է հայաբնակ շրջանների սահմանների անցկացման ժամանակ, որտեղ տվյալ վարչատարածքային միավորումում հայերն ու թուրքալեզու ժողովուրդները, հայերը և վրացիները բացարձակ մեծամասնություն չկազմեն: Այսպես, XX դ. սկզբին վարչատարածքային բաժանումով Հարավային Կովկասի 38 հայաբնակ գավառները միայն չորսում էին հայերը մեծամասնություն կազմում: Իսկ 1917թ. վարչատարածքային նոր բաժանման նախագծով հայերը մեծամասնություն էին կազմելու 11 գավառում: Ցավոք, բոլշևիկյան հեղափոխությունը հնարավորություն չտվեց իրականացնելու տարածաշրջանի վարչատարածքային բաժանման նախագիծը: Վարչատարածքային բաժանման այդ նախագծի իրականացման դեպքում Հարավային Կովկասում 1980-ական թվականների վերջերին վերսկսված էթնիկական բախումները, հնարավոր է, այսպիսի սուր բնույթ չկրեին: Ի վերջո սույն թեմայով առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ<sup>1</sup>:

---

<sup>1</sup>Վ. Մելիքյան, Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությունը երկրամասի վարչական սահմանաբաժանումների և զենատվոնների հարցում, <https://arar.sci.am/dlibra/publication>: Շ. Մահտեսյան, Վարչատարածքային բաժանման խնդիրներն Անդրկովկասի ժողովրդավարական դաշնային հանրապետության սահմանադրության մշակման աշխատանքների համատեքստում (1918թ. փետրվար-մայիս), ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, «Կանթեղ», գիտական հոդվածներ, 4(77), Եր., 2018թ., էջ 150-158: Գ.Պետրոսյան, Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում, Հայոց անկախ պետության կերտումը(1917թ. փետրվար-1918թ. հունիս), ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2018թ.: Ք. Գաչեչիլաձե, Конфликтогенность распада и реставрации империи: политико- географический подход (на примере бывшего российского Закавказья 1917—1923 гг.), <https://cyberleninka.ru/article> Д.Н.Прасолов, Земский вопрос в общественно-государственном взаимодействии на кавказе в конце XIX – начале XX в, Кавказология / Caucasology № 4/2020 , Нальчик, 2020г., стр. 69-94, С. Румянцев, Национализм и конструирование карт “Исторических территорий”: обучение национальным историям в странах Южного Кавказа, <https://muse.jhu.edu/article/561612/pdf> և այլք:

Մինչ Ռուսական կայսրությանը միանալը Հարավային Կովկասի վարչատարածքային միավորների մեծ մասը եղել է Պարսկաստանի վերահսկողության տակ: Վրաստանի թագավորությունը, Երևանի և Ղարաբաղի խանությունները գրեթե կիսանկախ կարգավիճակ ունեին, իսկ Նախիջևանի խանությունը ենթարկվել է Թավրիզում նստած Պարսկաստանի գահաժառանգին [1, էջ 6]: XIX դ. սկզբին տարածաշրջանը բաժանված է եղել հետևյալ վարչատարածքային միավորների՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորություն, Իմերեթիայի թագավորություն, Գուրիայի, Մեգրելիայի, Աբխազիայի, Աջարիայի իշխանություններ, Ախալցխայի փաշայություն, Երևանի, Ղարաբաղի, Նախիջևանի, Գյանջայի, Ղուբայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի և Թալիշի խանություններ: Արևմտյան Վրաստանի իշխանությունները և Ախալցխայի փաշայությունը գտնվում էին Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ, սակայն ներքին կառավարման հարցերում ունեին որոշ ինքնուրույնություն: Խանությունները, որի վարչական բաժանման հիմքում ընկած էր ջրաբաշխման սկզբունքը, բաղկացած էին միալներից: Յուրաքանչյուր միալ կազմվում էր այն բնակավայրերից, որոնց հողերը ոռոգվում էին միևնույն գետի ջրերով: Միալների կառավարիչներն էին նախնիները, որոնց նշանակում էր սարդարը կամ խանը: Հայաբնակ որոշ շրջաններում կառավարիչ նշանակվում էին մելիքները, որոնք օժտված էին նախնիների համար սահմանված իրավունքներով [6, էջ 15]: Ռուսական կայսրությունը XIX-XX դդ. Հարավային Կովկասում<sup>2</sup> իր տիրապետությունը հաստատելուց հետո մինչև 20-րդ դարի սկիզբը իրականացրել է 10 վարչատերիտորիալ բաժանում: ՀՀ ներկայիս տարածքում կազմավորվում է Հայկական մարզը: Ըստ ռուսական իշխանությունների հրապարակած 1846թ. դեկտեմբերի 14-ի օրենքի՝ Ախալցխայի գավառից առանձնացվում է Ախալքալակի շրջանը և միացվում Ալեքսանդրապոլի գավառին [12, էջ 165]: Հաջորդ վարչատարածքային խոշոր փոփոխություններն իրականացվում են 1840, 1846 և 1849թթ.:

Ռուսաց կայսր Ալեքսանդր II-ի՝ 1867թ. դեկտեմբերի 9-ի «Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխման մասին» հրամանագրով իրականացվում է վարչատարածքային նոր բաժանում [16, էջ 22]: Այդ բաժանման արդյունքում Հարավային Կովկասում կազմավորվում են 6 նահանգներ (Թիֆլիսի, Քութայիսի,

<sup>2</sup> Անդրկովկասին անվանում են նաև Այսրկովկաս կամ Հարավային Կովկաս: Սույն հոդվածում նպատակահարմար ենք համարում օգտագործել Հարավային Կովկաս եզրույթը:

Սևծովյան, Բաքվի, Ելիզավետպոլի և Երևանի), Դադաստանի մարզը, Սուխումի և Ջակատալայի օկրուգները: Նահանգներն իրենց հերթին բաժանվեցին գավառների, գավառները՝ ոստիկանական տեղամասերի, իսկ տեղամասերը՝ գյուղական և քաղաքային համայնքների: Վերջապես, 1878թ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով կայսերական Ռուսաստանը գրավեց նաև Կարսի ու Բաթումի մարզերը, որով ավարտվեց ամբողջ Հարավային Կովկասի միացումը Ռուսաստանին: Գավառների սահմանագծման հիմքում դրվեց տարածքային և ժողովրդագրական սկզբունքը, այսինքն՝ նրանցից ոչ մեկն իր տարածությամբ չպետք է գերազանցեր 6500 քառ. Վերստը (6890 քառ.կմ), իսկ բնակչության թիվը՝ 80 հազ. մարդը [6, էջ 15]: Վերլուծելով 1886-1915թթ. Հարավային Կովկասի նահանգների և գավառների բնակչության թվի շարժընթացի ցուցանիշները՝ պարզվում է, որ 1886-1897թթ. Հարավային Կովկասի գրեթե բոլոր գավառների բնակչության միջինացված թիվը պահպանվել է, իսկ 1915թ.-ից՝ չի պահպանվել: Հիշատակենք, որ նահանգների և գավառների սահմանագծման ժամանակ հիմնականում անտեսվել են պատմաէթնիկական գործոնը, տեղագրական, սոցիալ-մշակութային և տնտեսական սկզբունքները: Ցարական Ռուսաստանում, այդ թվում Հարավային Կովկասում 1905-1907թթ. սկիզբ առած բնակչության սոցիալական ընդվզումները և ազգամիջյան բախումները նպաստեցին ազգային վարչատարածքային բաժանման հարցը բարձրացնել 1909 և 1916թթ. զեմստվոյական խորհրդակցություններում, որտեղ հայազգի ներկայացուցիչները սահմանների փոփոխման հարցը հիմնավորում էին տնտեսական և էթնիկական բնույթի փաստարկներով, սակայն հայկական կողմը միշտ հայտնվել է փոքրամասնության վիճակում, որովհետև տարածաշրջանում մեծամասնություն կազմող վրացիներն ու թուրքալեզու մահմեդականները դեմ էին, և հին վարչատարածքային բաժանումը լիովին բավարարել է այդ մեծամասնությանը [11, էջ 60]:

1867թ. դեկտեմբերի 9-ի օրենքով վերացվեցին տեղամասերը, հետևաբար և պրիստավի պաշտոնը, իսկ նրանց փոխարեն նշանակվեցին գավառապետի մեկ կամ երկու օգնականներ, որոնք կատարում էին ոստիկանի պարտականություններ [6, էջ 17]: Գյուղական տանուտերերը(ստարշինա) ընտրվում էին երկու-երեք տարին մեկ՝ գյուղի ընդհանուր ժողովում: Տանուտեր կարող էր ընտրվել նա, ով ստանում էր ձայների մեծամասնությունը և ուներ 25-ից ոչ պակաս տարիք: Քաղաքները կառավարում էին տեղական ոստիկանական վարչությունները՝

նստիկանների, թաղամասային պետերի, նրանց օգնականների, գրագրերի միջոցով: 1867թ. վարչատարածքային բաժանումով Բաքվի նահանգի կազմից դուրս մնացին Նուխի(Շաքի) և Արեշի գավառները: Դրանք միացվեցին նորաստեղծ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգին, որով էապես ավելացավ շիա մահմեդականների կամ, ինչպես Կովկասյան օրացույցում է ներկայացված, «Ադրբեջանի թաթարների» թիվը: Կարծում ենք, այդ միացումը միտումնավոր է արվել, որպեսզի հայերը Ելիզավետպոլի նահանգում մեծամասնություն չկազմեն: Հիշատակենք, որ Շիրվանում բնակվող հայերը, որոնք մեծամասնություն չեն կազմել, տեղաբնիկներ էին: Այդ է փաստում ցարական կառավարության պաշտոնյա, կովկասագետ Յու. Գագամեյստերի տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնականությունը կարող են սպացուցել միայն հայերը և ուղիները»: Կուր գետից մինչև Կասպից ծով բնակվում էին մեծ թվով հայեր. հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի [5, էջ 57]:

Հարավային կովկասում 1886-1915թթ. ընկած ժամանակահատվածում բոլոր նահանգներում և մարզերում գրանցվել է բնակչության թվի աճ: Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ բնակչության հարաբերական թվի աճի բարձր ցուցանիշներ գրանցվել են Բաքվի (72.6%), Ելիզավետպոլի (70,6%) և Թիֆլիսի (67,8%) նահանգներում, ամենացածր՝ Դաղստանի մարզում (19,5%), իսկ Երևանի նահանգում այն կազմել է 59.0%, Կարսի մարզում՝ 46.8%, Քութայիսի նահանգում՝ 45.9%: Թե ինչ գործոններով է պայմանավորված Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների ազգաբնակչության թվի շեշտակի աճը, կանդրադառնանք հետագա ուսումնասիրություններում: Հիշատակենք, որ մինչև 1867թ. Բաքվի նահանգի սահմաններում ընդգրկել էին նաև պատմական Հայաստանից դուրս գտնվող Շամախին և Շաքին: «Շատ մարզեր,- ասված էր ծրագրում,- ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքու և Շամախու մարզերը՝ Էջմիածնի նախագահ վանքով, կազմում են Հայաստանի վաղեմի թագավորության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը» [3, էջ 308]:

Աղյուսակ 1:

**Հարավային Կովկասի վարչատարածքային տարածումիական միավորներն ու բնակչության թվի շարժընթացը**

Նահանգ, մարզ, օկրուգ	Տարածքը քառ. կմ	Գավառների և օկրուգների թիվը	Ոստիկանական տեղամասերի թիվը	Գյուղական համայնքների թիվը	Գյուղական բնակավայրերի թիվը	Քաղաքային բնակավայրերի թիվը	Գավառների և օկրուգների բնակչության թիվը հազ. մարդ			
							1886թ.	1897թ.	1914թ.	1915թ.
Թիֆլիսի նահ. <sup>3</sup>	41860.6	10	29	755	2220	8	882532	1051031	1494713	1481211
Քուրթայիսի նահ.	34292.3	10	34	383	1612	6	918596	1058241	1410979	1340665
Ելիզավետպոլի նահ.	41497.2	8	27	431	1521	3	728943	878415	1191390	1243507
Բաքվի նահանգ	32916.4	6	19	434	1180	4	712703	826716	1181907	1230476
Երևանի նահանգ	24852.2	7	25	149	1267	5	670405	829496	1044097	1065914
Դաղստանի մարզ	27917.6	9	-	508	1180	3	592780	571154	702237	708419
Կարսի մարզ	17426.4	4	14	803	803	1	174044	290654	391213	255467
Սևծովյան նահանգ	6280.5	3	3	58	58	1	18125	57477	194463	212735
<b>Ընդամենը</b>	<b>227043.2</b>	<b>57</b>	<b>151</b>	<b>3521</b>	<b>9841</b>	<b>31</b>	<b>4698128</b>	<b>5563184</b>	<b>7610999</b>	<b>7538394</b>

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. КК (Кавказский Календарь ) на 1900г., Тиф. 1899г., отд. III, стр. 21-40: Բ. Իշխանյան Վիճակագրական ուսումնասիրություն Անդրկովկասյան ժողովուրդների: Առաջին մաս: Ժողովուրդների տերիտորիական բաժանումները և նրանց աճումը Անդրկովկասում: Հրատ. «Ուրարդիա», Բագու 1919թ. նյութերը:

1906-1917թթ. Ռուսական կայսրությունում քննարկվել է Հարավային Կովկասի վարչատարածքային նոր բաժանման հարցը: Ցավոք, այդ հարցն անընդհատ հետաձգվել է: Սակայն Անդրկովկասյան (Հարավային Կովկասի) առանձին կոմիտեին կից 1917թ. ամռանը կազմավորվում է վարչատարածքային բաժանման հանձնաժողով, որը պետք է քննարկեր ժամանակավոր կառավարության Ներքին գործերի նախարարության կողմից ուղարկված Անդրկովկասի (Հարավային

<sup>3</sup> Ուսումնասիրության նպատակահարմարությունից ելնելով՝ Թիֆլիսի նահանգի մեջ ներառել ենք Չակատալայի օկրուգը, իսկ Քուրթայիսի նահանգի մեջ՝ Սուխումի օկրուգը և Բաթումի մարզը:

Կովկասի) վարչատարածքային բաժանման նախագիծը: Հանձնաժողովի անդամների մեծ մասը կողմ էր, որ գավառային տեղամասերը կամ գավառակների սահմաններն անցկացնելիս հաշվի առնվեն բնակչության էթնիկական և կրոնական գործոնները: Հատկանշական է, որ նոր վարչական այդ բաժանման արդյունքում վրացիները մեծամասնություն էին կազմելու Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում, Կովկասի թաթարները (ներկայիս ադրբեջանցիներ)՝ Բաքվի և Ելիզավետպոլի, իսկ հայերը՝ Ալեքսանդրապոլի, Երևանի և Գանձակի նահանգներում: Վերջին երեք նահանգներում հայերի թիվը 1916թ. կազմելու էր շուրջ 1,3 մլն. Մարդ [9]: Ցավոք, այդ վարչատարածքային բաժանումը չիրականացվեց՝ պայմանավորված տարածաշրջանի աշխարհաքաղաքական անկայունությամբ և Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխությամբ: Հիշատակենք, որ այդ նախագծին դեմ էին հանձնաժողովի վրացի և ադրբեջանցի անդամները: Սոցիալ-ֆեդերալիստների «Հայրաթ» թաթարական կուսակցությունը իր ծրագրում առաջադրում էր Ադրբեջանի տարածքային ինքնավարության խնդիրը, որը ներառելու էր ամբողջ Բաքվի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի 2/3-ը, Երևանի նահանգի կեսը և Թիֆլիսի նահանգի մի մասը, որը սահմանակից է Ելիզավետպոլի նահանգին, այն է՝ Ջաքատալայի շրջանի մի մասը [7, էջ 25]:

Ի վերջո հայկական կողմից կազմվեց հայաբնակ վարչատարածքային բաժանման երկու նախագիծ: Առաջին նախագծի հեղինակը Գևորգ Խատիայանն էր: Ըստ այդ նախագծի՝ տարածաշրջանը բաժանվելու էր նահանգների և գավառների, իսկ երկրորդով նախատեսվում էր մեկ նահանգ՝ 15 գավառներով [9]: Վարչատարածքային բաժանման նախագծի հեղինակներից էր գյուղատնտես Ստեփան Իվանի Կամսարականը: Նա նախագծերը ներկայացրեց համահայկական խորհրդակցության ժողովին 1917թ. հոկտեմբեր 6-ին, որտեղ հավանության արժանացավ հայկական երեք նահանգների բաժանման սկզբունքը [10, էջ 350-351]: Նախագծում առաջարկվում էր վարչատարածքային բաժանման երկու տարբերակ: Առաջին տարբերակով հայկական նահանգները բաժանվելու էին 16 գավառների, երկրորդ տարբերակով՝ 15: Երկու տարբերակով էլ հայկական նահանգներում հայերը մեծամասնություն էին կազմելու: Առաջին տարբերակով հայկական նահանգների 16 գավառների բնակչության ընդհանուր թիվը կազմելու էր 2.081.120 մարդ, այդ թվում հայերը կազմելու էին ամբողջ բնակչության թվի 58.6%-ը, մահմեդականները՝ 31.3%-ը, այլ ազգություն-

ները՝ 10,1%-ը [10, էջ 360], իսկ տարածքը մեր մոտավոր հաշվարկով կազմելու էր շուրջ 56,7 հազ կմ<sup>2</sup>: Երկրորդ տարբերակով՝ 15 գավառների՝ 2.036.842 բնակչությամբ, այդ թվում՝ հայերը՝ 59,1%, մահմեդականները՝ 32,7% և այլ ազգություններ՝ 8,2% [10, էջ 354], իսկ տարածքը՝ 53,1 հազ. կմ<sup>2</sup>:

Նախագծի առաջին տարբերակում հայերը ճնշող մեծամասնություն (70.0 և ավելի տոկոս) էին կազմելու Շուշիի, Ապարան-Դարաչիչակ-Կրբուլաղի, Ալեքսանդրապոլի և Քարվանսարայի գավառներում: Մեծամասնություն (50.0-69.9 %) էին կազմելու Ջրաբերդ-Գյուլիստան-Գանձակի, Չանգեզուրի, Նոր Բայազետի, Արարատի, Լոռիի և Ախալքալակի գավառներում, իսկ 10-ից մինչև 49.9 % էին կազմելու Շարուրի, Արշարունու, Կարսի, Կաղզվանի, Նախիջևանի և Դարալագյազի գավառներում: Երկրորդ տարբերակով՝ հայերը ճնշող մեծամասնություն էին կազմելու Շուշիի, Ալեքսանդրապոլի, Քարվանսարայի և Ախալքալակի գավառներում, մեծամասնություն՝ Ջրաբերդ-Գյուլիստանի-Գանձակի, Չանգեզուրի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Երևանի և Լոռիի գավառներում և 10-49.9%՝ Շարուր Դարալագյազի, Սուրմալուի, Կարսի, Կաղզվանի և Նախիջևանի գավառներում [10, էջ 360]:

Առաջին նախագծով ստեղծվելու էր Ալեքսանդրապոլի նահանգը, որի կազմի մեջ մտնելու էին Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի գավառը, Թիֆլիսի նահանգի երկու գավառները, Էջմիածնի գավառի տեղամասերից մեկը: Ի դեպ, այս գաղափարն ամենևին էլ նորություն չէր, այլ ամրագրվել էր դեռևս 1840թ. Հարավային Կովկասում վարչատարածքային բարեփոխումների մասին օրենքում [8, էջ 271]: Ցավոք, բոլշևիկյան հեղափոխությունը հնարավորություն չտվեց այս նախագիծն իրականացնելու: 1918թ. մայիս ամսվա վերջին Հարավային Կովկասում կազմավորվեցին երեք անկախ պետություններ՝ Հայաստան, Վրաստան և Ադրբեջան: Այդ հանրապետությունների միջև տարածքային լուրջ հիմնախնդիրներ էին առկա, որոնք ուղեկցվում էին պատերազմական գործողություններով: Ադրբեջանը, 1919թ. ստանալով Թուրքիայի և Անգլիայի աջակցությունը, խնդիր դրեց իր երկրին միացնել Շուշիի, Չանգեզուրի և Նախիջևանի գավառները: Այդ հավակնություններն Ադրբեջանն առաջադրեց Ազգերի լիգային, որն այդ կազմակերպությունում հավանության չարժանացավ: Մերժում ստանալով՝ ադրբեջանցիները ավելի հաճախակի դարձրին բախումները հայերի հետ: Հիշատակենք, որ 1918-1920թթ. Նախիջևանի, Չանգեզուրի և

Շուշիի գավառները փաստացի Հայաստանի Հանրապետության վերահսկողության տակ են գտնվել:

Թուրքական զորքերի՝ Հարավային Կովկասից հեռանալուց հետո հայկական քաղաքական ազդեցության ներքո գտնվող Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը 1919թ. ժամանակավորապես անցնում են բրիտանական էքսպեդիցիոն կորպուսի վերահսկողությանը [14, էջ 178]: Ադրբեջանի կառավարությունը ձգտում էր պատմական փաստ ներկայացնել, որ Ղարաբաղը իրենց է պատկանել, իսկ հայկական կողմը մինչև վերջ տրամադրված էր նրա անկախությանը: 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիում անցկացված Ղարաբաղի հայության առաջին համագումարով Լեռնային Ղարաբաղը հայտարարվել է անկախ վարչաքաղաքական միավոր: Ադրբեջանը ստեղծված պայմաններում 1919թ. օգոստոսի 22-ին ստիպված համաձայնագիր է ստորագրում Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) Հայոց Ազգային խորհրդի հետ, որով ադրբեջանական ուժերը չէին մտնելու ԼՂ-ի տարածք, իսկ երկրի լեզվի մասին ուժերը չէին ճանաչելու Հայոց Ազգային խորհուրդը: Ադրբեջանական կողմի համաձայնագրի կետերի պարբերաբար խախտումների հետևանքով 1920թ. ապրիլի 25-ին կայացած Ղարաբաղի հայության համագումարով Հայոց Ազգային խորհուրդը հռչակում է ԼՂ միացումը ՀՀ-ը՝ որպես նրա անբաժան մաս [2, էջ 303]:

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, 1918թ. գերմանական կառավարության քաղաքական օժանդակություն ստանալով, վերահսկողություն էր հաստատել ողջ Արևազիայի վրա, որն այդ ժամանակ գտնվում էր լեռնականների հանրապետության կազմում [17, էջ 271]: 1920-1921թթ. վրացական «ազգային գվարդիայի» զորամիավորումները «բոլշևիզացման» դեմ պայքարի կարգախոսով լայնամասշտաբ ռազմական գործողություններ ծավալեցին օսերով բնակեցված տարածքներում [18, էջ 194-197]:

**Եզրահանգումներ:** Մեր ուսումնասիրությունները բերել են հետևյալ եզրահանգումների.

- Ռուսական կայսրությունը XIX-XX դդ. Հարավային Կովկասում իր տիրապետությունը հաստատելուց հետո մինչև 20-րդ դարի սկիզբը իրականացրել է 10 վարչատերիտորիալ բաժանում: Ռուսաց կայսր Ալեքսանդր II-ի 1867թ. դեկտեմբերի 9-ի «Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխման մասին» հրամանագրով իրականացնում է վարչատարածքային նոր բաժանում: Տարածաշրջանը բաժանվեց 6 նահանգների (Թիֆլիսի,

Քութայիսի, Սնծովյան, Բաքվի, Ելիզավետպոլի և Երևանի), Դադաստանի մարզի, Սուխումի և Չակատալայի օկրուգների: Նահանգները բաժանվեցին գավառների, գավառները՝ ոստիկանական տեղամասերի, գյուղական և քաղաքային համայնքների: Վերջապես, 1878թ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով կայսերական Ռուսաստանը գրավեց նաև Կարսի ու Բաթումի մարզերը, որով ավարտվեց ամբողջ Հարավային Կովկասի միացումը Ռուսաստանին: Գավառների սահմագծման հիմքում դրվեց տարածքային և ժողովրդագրական սկզբունքը: 1886 և 1897թթ. այդ ցուցանիշը Հարավային Կովկասի գավառներում (բնակչության միջինացված թիվը) պահպանվել է, իսկ 1915թ.-ից՝ չի պահպանվել:

- Հարավային Կովկասի ազգային վարչատարածքային բաժանման հարցը բարձրացվել է 1909 և 1916թթ. զեմստվոյական խորհրդակցություններում, որտեղ հայազգի ներկայացուցիչները սահմանների փոփոխման հարցը հիմնավորում էին էթնիկական և տնտեսական բնույթի փաստարկներով, սակայն հայկական կողմը մշտապես հայտնվում էր փոքրամասնության վիճակում, քանի որ վրացիներն ու մահմեդականները գրեթե ամենուրեք գերիշխում էին, և հին վարչատարածքային բաժանումը լիովին բավարարել է այդ մեծամասնությանը:
- Անդրկովկասյան առանձին կոմիտեին կից 1917թ. ամռանը կազմավորվում է վարչատարածքային բաժանման հանձնաժողով, որը պետք է քննարկեր ժամանակավոր կառավարության Ներքին գործերի նախարարության կողմից ուղարկված Անդրկովկասի վարչատարածքային բաժանման նախագիծը: Հանձնաժողովում համաձայնության չգալով՝ որոշում են նախագիծը փոփոխության ենթարկել: Հանձնաժողովի անդամների մեծ մասը կողմ էր, որ գավառային տեղամասերը կամ գավառակների սահմաններն անցկացնելիս հաշվի առնեն բնակչության էթնիկական և կրոնական հատկանիշները: Հայաբնակ նահանգների թիվը լինելու էր երեքը՝ Ալեքսանդրապոլի, Երևանի և Գանձակի: Վրացաբնակ նահանգների թիվը երկուսն էին՝ Թիֆլիսի և Քութայիսի, իսկ ադրբեջանաբնակը՝ Բաքու և Ելիզավետպոլի նահանգներ: Հատկանշական է, որ նոր վարչական այդ բաժանման արդյունքում վրացիները մեծամասնություն էին կազմելու Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում, մահմեդականները՝ Բաքվի և Ելիզավետպոլի, իսկ

հայերը՝ Ալեքսանդրապոլի, Երևանի և Գանձակի նահանգներում: Վերջին երեք նահանգներում հայերի թիվը 1916թ. կազմելու էր շուրջ 1,3 մլն. մարդ: Ցավոք, այդ բաժանումը չիրականացվեց պայմանավորված աշխարհաքաղաքական անկայունությամբ և Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխությամբ: XX դ. սկզբի վարչատարածքային բաժանումով Հարավային Կովկասի 38 հայաբնակ գավառները միայն չորսում էին հայերը մեծամասնություն կազմում: Իսկ 1917թ. վարչատարածքային նոր բաժանման նախագծով հայերը մեծամասնություն էին կազմելու 11 գավառում:

- Ադրբեջանը, 1919թ. ստանալով Թուրքիայի և Անգլիայի աջակցությունը, խնդիր դրեց իր երկրին միացնել Շուշիի, Զանգեզուրի և Նախիջևանի գավառները: Այդ հավակնություններն Ադրբեջանն առաջադրեց Ազգերի լիգային, որը հավանության չարժանացավ: Մերժում ստանալով՝ ադրբեջանցիները էլ ավելի հաճախակի դարձրին բախումները հայերի հետ: 1918-1920թթ. Նախիջևանի, Զանգեզուրի և Շուշիի գավառները փաստացի Հայաստանի Հանրապետության վերահսկողության տակ են գտնվել:
- Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, գերմանական կառավարության քաղաքական օժանդակություն ստանալով, 1918թ. վերահսկողություն հաստատեցին ողջ Աբխազիայի վրա, որն այդ ժամանակ գտնվում էր Լեռնականների հանրապետության կազմում: Վրացական մենշևիկյան կառավարությունը բռնությամբ էր փորձում լուծել նաև հարավային օսերի հարցը: 1920-1921 թթ. վրացական «ազգային գվարդիայի» զորամիավորումները, «բոլշևիզացման» դեմ պայքարի կարգախոսով, լայնամասշտաբ ռազմական գործողություններ ծավալեցին օսերով բնակեցված տարածքներում:

**ИЗМЕНЕНИЯ АДМИНИСТРАТИВНОГО ДЕЛЕНИЯ И  
ЭТНИЧЕСКОГО СОСТАВА НАСЕЛЕНИЯ ЮЖНОГО КAVКАЗА  
(ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. - НАЧАЛО XX В.)**

**Бояджян А. Г., Майтесян Г. Ш.**

Основная цель данной статьи - рассмотрение реформы в территориально-административном делении региона во второй половине

XIX-նախա ԽԽ., իրաճիքի ք իճնաճիքն աճնոկոնֆաճիոնալնո աճնա ճաճաճա, աճնաճնա ք ճաճնաճնաճնա ճաճաճա.

**Կլաճաճա ճաճա:** աճնաճնաճնա-տաճնաճնա ճաճա, աճնաճնա ճաճա, ճաճա, ճաճա, ճաճա, ճաճա, ճաճա, ճաճա, ճաճա.

**CHANGES IN THE ADMINISTRATIVE SEPARATION AND ETHNIC COMPOSITION OF THE POPULATION OF THE SOUTH CAUCASUS (SECOND HALF OF THE 19<sup>TH</sup> CENTURY AT THE BEGINNING OF THE 20<sup>TH</sup> CENTURY)**

**Boyadjyan A. G., Mahtesyan G. Sh.**

The main purpose of this article is to substantiate the truthfulness of this provision, based on the changes made by the main powers in the administrative-territorial division. Especially, this can be seen clearly in a drawing of Armenian-populated provinces borders, where this administrative-territorial association of Armenians and Turkish people, Armenians and Georgians were made in a way which will not make up an absolute majority.

**Keywords:** administrative-territorial reform, ethnic composition, province, settlement, mahal, pasha, district, region, kingdom.

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ավալաճնաճնա Ն. ճաճաճնա ճաճա Աճնաճնա ճաճաճնաճնա, (1801-1917թթ.): Եճ.: «ճաճաճնաճնա» ճաճա.: 1959: 443 էճ:
2. Բալաճնաճնա Վ. Աճնաճնա ճաճաճնաճնա: Եճ., «Աճնաճնա» ճաճա.: 2002: 407 էճ:
3. Դիլաճնաճնա Վ. Աճնաճնա ճաճաճնաճնա XIX ճաճա աճնաճնա էճնաճնաճնա ճաճա ճաճա ճաճաճնաճնա ճաճաճնաճնա: Եճ.: ճաճաճնաճնա ՆՆճ ճաճա ճաճա.: 1989: 308 էճ:
4. Կաճնաճնաճնա Ն. Աճնաճնաճնա: Եճ.: «ճաճաճնաճնա ճաճաճնաճնաճնաճնա» ճաճա.: 2008: 368 էճ:
5. Կաճնաճնաճնա Ն. ճաճաճնաճնա ճաճաճնաճնա ճաճաճնաճնաճնա// Լճճ: 1989: N 2: էճ 218-267:
6. ճաճ ճաճնաճնաճնա ճաճաճնաճնա: Եճ.: ճաճաճնաճնա ՆՆճ ճաճա ճաճա.: ճ.Ն: 1981: 1045 էճ:
7. ճաճնաճնաճնա ճ. Աճնաճնաճնա(Եճնաճնաճնա ճաճաճնաճնա միճնաճնա մաճնա ճաճաճնա), Եճ.: «Գճնաճնաճնա» ճաճա.: 2002: 149 էճ:

8. Հայրապետյան Ա. Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.–XXդ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Եր., ՀՀ «Գիտություն» հրատարակչություն: 2011: 271 էջ:
9. Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 375, ցուցակ 1, գործ 76:
10. Մահտեսյան Հ. Ստեփան Կամսարականի կազմած՝ Անդրկովկասի վարչատարածքային բաժանման ծրագիրը (1917թ.)// Լրաբեր հասարակական գիտությունների: 2019: Հ.1: էջ 350-360:
11. Մելիքյան Վ. Հ. Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությունը երկրամասի վարչական սահմանաբաժանումների և զեմստվոների հարցում:// Լրաբեր հասարակական գիտությունների: 2009: № 3: էջ 60-73:
12. Պարսամյան Վ. Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում: Եր.: «Գիտություն» հրատ.: 1940: 165 էջ:
13. Ռուբեն Գանձակ-Ղարաբաղի վեճը// «Դրօշակ»: 1926: Յունուար, N2, էջ 46-50:
14. Гарибджанян Г. Б. Страницы истории армянского народа. Ереван: Гитупон. 1998. 178 с.
15. Гагемейстер Ю. Хозяйственный очерк Закавказского края: народонаселение. Сборник газеты Кавказ, издаваемой О. Н. Константиновым. Тифлис. 1847. С. 358.
16. Нагорный Карабах в 1918-1923 г.г. Сборник материалов и документов, ответств. ред. док. ист. наук, проф. В. А. Микаелян, сост. В. А. Акопян, О. С. Баликян, А. С. Вирабян, В. А. Микаелян, В. С. Эвоян. Ереван. 1922. стр. XII
17. Деникин А. Очерки русской смуты. Минск: «Хорвест». 2002. 280 с.
18. Цховребов В. Д., Санакоев М. П. Южная Осетия в период трех революций (1900-1921г.). Тбилиси. Изд.Ецниерба. 1981. 197 с.

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Բոյաջյան Ա. Գ.** – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ՝ [a.boyajyan@mail.ru](mailto:a.boyajyan@mail.ru)

**Մահտեսյան Հ. Շ.**

Շիրակի երկրագիտական թանգարան

Տրվել է խմբագրություն՝ 03.09.2021

Գրախոսվել է՝ 03.02.2022